

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

 **BYBLOS BANK**
ARMENIA

+374 60 61 61 00
byblosbankarmenia.am

ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տվյալ ամփոփաթերթում ներառված սակագներն ու պայմանները կարող են փոփոխվել:

Բիբլոս Բանկ Արմենիայի կողմից տրամադրվող ավանդների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել +374 60 61 61 00 հեռախոսահամարին, այցելել Բանկի պաշտոնական կայքէջ՝ byblosbankarmenia.am, կամ դիմել ցանկացած մասնաճյուղ:

Մեր մասնաճյուղերը տեղակայված են հետևյալ հասցեներում.

- Արովյան 6, Երևան
- Պապ թագավորի 18/3, Երևան
- Կոմիտաս 38/2, Երևան
- Բաղրամյան 84/1, Երևան

Դուք ունեք Բանկի հետ հաղորդակցվելու իրավունք ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. «Ձեր ֆինանսական տեղեկատվություն» (fininfo.am) ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգն է:

Հրապարակված 03/2026թ.
Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ

Կուտակային ավանդը խնայողություններ անելու և միաժամանակ եկամուտ ստանալու ամենահարմար տարբերակներից է: Այն կուտակային է, ինչը նշանակում է, որ Հաճախորդը կարող է համալրել միջոցները ավանդի գործողության ամբողջ ընթացքում (բացառությամբ դրա ավարտին նախորդող երեք ամսվան):

Կուտակային ավանդ ներդնելիս հաճախորդները կստանան անվճար Mastercard Gold, Mastercard World կամ Mastercard World Elite քարտ՝ ավանդի գործողության ողջ ընթացքի համար: Քարտերը տրամադրվում են ըստ ներդրված ավանդի գումարի՝

ՔԱՐՏԱՏԵՍԱԿ	ԱՎԱՆԴԻ ԳՈՒՄԱՐ (ԴՐԱՄՈՎ)	ԱՎԱՆԴԻ ԳՈՒՄԱՐ (\$-ՈՎ և €-ՈՎ)
MASTERCARD GOLD	≤9,999,999	≤19,999
MASTERCARD WORLD	10,000,000 – 29,999,999	20,000 – 69,999
MASTERCARD WORLD ELITE	≥30,000,000	≥70,000

1

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ

Ավանդը ներդրվում է ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար և Եվրո արժույթներով և ներգրավվում է ֆիզիկական անձանցից:

Կուտակային ավանդի դիմաց տոկոսները վճարվում են Ժամկետի վերջում, իսկ ամսական, եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան հաճախականությամբ վճարվելու դեպքում անվանական տոկոսադրույքը նվազում է 0.25 տոկոսային կետով, բացառությամբ 18 կամ 24 ամսով ներգրավվող դրամային ավանդների, որոնց անվանական տոկոսադրույքը կնվազի 0.5 տոկոսային կետով:

Տոկոսագումարը հաշվարկվում է օրական՝ հաշվին առկա մնացորդի նկատմամբ:

ԱՐԺՈՒՅԹ	ԳՈՒՄԱՐ**	12 ԱՄԻՍ	18 ԱՄԻՍ	24 ԱՄԻՍ
ՀՀ ԴՐԱՄ	100,000 - 90,000,000	8.75%	9%	9.25%
ԱՄՆ ԴՈԼԱՐ	250 - 180,000	4.25%	4.25%	4.5%
ԵՎՐՈ	250 - 150,000	1.25%	1.5%	2.25%

ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺՈՒՅԹ	12 ԱՄԻՍ	18 ԱՄԻՍ	24 ԱՄԻՍ
ՀՀ ԴՐԱՄ	8.68%-8.84%	8.5%-9%	8.75%-9.25%
ԱՄՆ ԴՈԼԱՐ	4.04% - 4.25%	4% - 4.25%	4.25% - 4.5%
ԵՎՐՈ	1% - 1.25%	1.25% - 1.5%	2% - 2.25%

Մինչև ժամկետի ավարտը Կուտակային ավանդը ենթակա է վերադարձի Հաճախորդի առաջին իսկ պահանջով: Ավանդի մասնակի վերադարձ չի կատարվում: Կուտակային ավանդը ժամկետից շուտ վերադարձնելիս կատարվում է վերահաշվարկ՝ հիմք ընդունելով վերադարձման պահին Բանկում տվյալ արժույթով Պարզ խնայողական հաշվի համար գործող տոկոսադրույքը՝

ԱՐԺՈՒՅԹ	Տոկոսադրույքը
ՀՀ ԴՐԱՄ	3.75%
ԱՄՆ ԴՈԼԱՐ	0.5%
ԵՎՐՈ	0.1%

ՆՇՈՒՄ. Պարզ խնայողական հաշվի նվազագույն մնացորդը սահմանված է 200,000 ՀՀ դրամ (500 ԱՄՆ դոլար կամ 500 եվրո): Եթե հաշվում առկա միջոցներն ավելի քիչ են, քան սահմանված նվազագույն մնացորդը, տոկոսագումար չի կուտակվում:

Վերահաշվարկի արդյունքում Հաճախորդին հարկ եղածից ավելի տոկոսներ վճարված լինելու դեպքում դրանք հաշվանցվում են վերադարձի ենթակա ավանդի գումարից, այնուհետև ավանդի գումարը տրամադրվում է Հաճախորդին:

Կուտակային ավանդի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ

ԱՎԱՆԴԻ ԺԱՄԿԵՏ	1 տարի
ԱՎԱՆԴԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ	10%
ԱՎԱՆԴԻ ԱՐԺՈՒՅԹ	ՀՀ դրամ
ԱՎԱՆԴԻ ԳՈՒՄԱՐ	5,000,000
ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ	10%

Եռամսյակային վճարվող տոկոսագումար՝

I = ((5,000,000 * 10%) * ¼) – 10% = 112,500

Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1 + APY)^{(D_n / 365)}}$$

որտեղ՝

A - ավանդի սկզբնական գումարն է

n - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է

N - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված

Kn - ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր

Dn - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ

Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, $D1 = 0$

2

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Կուտակային ավանդ կարելի է ներդնել Բանկի մասնաճյուղերում: Կուտակային Ավանդն իր ժամկետի ավարտին կարող է երկարաձգվել նույն ժամկետով, եթե առկա է այդ մասին Հաճախորդի գրավոր համաձայնությունը կամ գրավոր հանձնարարականը: Եթե ավանդի երկարաձգման օրը ոչ աշխատանքային է, ապա ավանդը երկարաձգվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Ավանդի գումարը կանխիկացնելու դեպքում կիրառվում է կանխիկացման վճար Բանկում գործող սակագների համաձայն, բացառությամբ այն միջոցների, որոնք որպես ավանդ մուտքագրվել էին կանխիկ ձևով:

Կուտակային ավանդի ձևակերպման պահից հինգ օրվա ընթացքում Հաճախորդին (բացառությամբ մինչև քսանմեկ տարեկան Հաճախորդների) տրամադրվում է օվերդրաֆտի հնարավորությամբ անվճար դեբետային քարտ:

Ավանդի դիմաց տոկոսները հաշվարկվում են հիմք ընդունելով 365 (երեք հարյուր վաթսուհինգ) օր օրացույցային տարին: Հաշվարկված տոկոսագումարները մուտքագրվում են ավանդատուի քարտային հաշվին: ՀՀ դրամով ավանդի տոկոսները վճարվում են ՀՀ դրամով, իսկ արտարժույթային ավանդի դեպքում Հաճախորդի ցանկությամբ ՀՀ դրամով կամ ավանդի արտարժույթով՝ անհրաժեշտության դեպքում կատարելով արտարժույթի փոխարկում ՀՀ դրամ՝ Բանկի կողմից սահմանած փոխարժեքով:

Բանկի և Հաճախորդի միջև ծագած վեճերը ենթակա են ՀՀ դատարանների իրավասությանը: Կուտակային ավանդի սպասարկման կապակցությամբ Հաճախորդի բողոք-պահանջները կարող են ներկայացվել նաև Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Բանկը կարող է հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, եթե Հաճախորդի կողմից Բանկի դեմ ներկայացված գույքային պահանջը չի գերազանցում 250,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, և գործարքի գումարը չի գերազանցում 500,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Դա նշանակում է, որ Բանկը չի կարող վիճարկել վերոնշյալ պայմաններին բավարարող

պահանջներով ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից Բանկի դեմ կայացրած վճիռները:

Բանկային հաշվի և դրանում առկա միջոցների տիրապետման հաշվետիրոջ իրավունքների սահմանափակումը, ինչպես նաև առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական ջոցների բռնագանձումը կարող են իրականացվել դատարանի վճռով՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից կայացված որոշումների հիման վրա:

ՀՀ Հարկային օրենսգրքի համաձայն ֆիզիկական անձ հանդիսացող ավանդատուին հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ավանդատուի հարկային գործակալ, գանձում է եկամտային հարկ եկամտի (վճարվող տոկոսագումարի) 10%-ի չափով և փոխանցում ՀՀ պետական բյուջե:

Տոկոսները հաշվարկվում են ավանդի ներդրման օրվանից մինչև ավանդի ժամկետի ավարտի նախորդող օրը:

Ավանդային հաշվին չեն կարող մուտքագրվել երրորդ անձանցից ստացված դրամական ջոցներ:

Հաճախորդը չի կարող ունենալ ավելի, քան չորս ավանդ նույն արժույթով: Չորսից ավելի ավանդ ունենալու դեպքում Բանկն իրավունք ունի պահանջելու միավորել ավանդները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան կստանայիք Դուք, եթե Ձեր ավանդի դիմաց ստացված տոկոսադրույքները վերաներդնեիք ավանդի տեսքով:

3

ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ	Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավելի է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է այն դրամային ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

ՍԱԿԱԳԻՆ

Անվանում	Սակագին*
Հաշվից քաղվածքների տրամադրում	
• յուրաքանչյուր ամիս	անվճար
• լրացուցիչ՝ մինչև 6 ամիս**	3,000
• լրացուցիչ՝ 6 ամսից ավելի**	6,000
Հաշվի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում**	3,000
Ներքին լիազորագրի հաստատում**	5,000
Աուդիտի նպատակով հաշվի վերաբերյալ տեղեկությունների տրամադրում**	10,000
Կանխիկ միջոցների մուտքագրում հաշիվներին՝ ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/Եվրո	0%
Կանխիկ 500 Եվրո թղթադրամի մուտքագրում ցանկացած հաշվին	1%
Կանխիկ միջոցների ելքագրում ընթացիկ հաշիվներից կանխիկ մուտքագրված միջոցների դիմաց (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/Եվրո)	0%
ԱՄՆ դոլար կանխիկացում հաշիվներից անկանխիկ մուտքագրման դիմաց	0.5%
Եվրո կանխիկացում հաշիվներից անկանխիկ մուտքագրման դիմաց	1%
ՀՀ դրամով կանխիկացում հաշվից անկանխիկ մուտքագրման դիմաց	0.2%
Բանկի կողմից գնանշվող արտարժույթով հնամաշ թղթադրամի փոխանակում	3%
Մինչև 2004թ. թողարկված 5, 10, 20, 50 ԱՄՆ դոլար արժողությամբ և մինչև 2009թ. թողարկված 100 ԱՄՆ դոլար արժողությամբ թղթադրամի մուտքագրում***	1%
Մինչև 2004թ. թողարկված 5, 10, 20, 50 ԱՄՆ դոլար արժողությամբ և մինչև 2009թ. թողարկված 100 ԱՄՆ դոլար արժողությամբ թղթադրամի կանխիկացում	0%

*Սակագները ներկայացված են ՀՀ դրամով

**Ներառյալ ԱԱՀ

***Նշված թղթադրամներով օրական ընդհանուր մինչև 1000 ԱՄՆ դոլարի ընդունումն իրականացվում է առանց միջնորդավճարի:

Նշում. Մինչև 2016թ. հունվարի 1-ը թողարկված անգլիական ֆունտ արժողությամբ թղթադրամներ Բանկի կողմից չեն ընդունվում:

ԱՆՅՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Բանկի մասնաճյուղում ավանդ ներդնելիս Հաճախորդն անձամբ ներկայացնում է փաստաթղթերի բնօրինակները, սակայն Բանկին տրվում են պատճենները:

Հաճախորդից պահանջվող փաստաթղթեր

- Անձնագիր կամ անձը հաստատող փաստաթուղթ
- Հանրային ծառայությունների համարանիշ*

Բանկում լրացվող ստորագրվող փաստաթղթեր

- Ֆիզիկական անձանց բանկային հաշվի բացման և վարման պայմանները
- Ստորագրության նմուշի քարտ
- «Ճանաչիր քո հաճախորդին» ձևաթուղթ
- ՖԱՏԿԱ համապատասխանեցման ձևաթուղթ
- Ծանուցում ավանդների հատուցման երաշխավորման պայմանների կարգի մասին

*Կիրառելի է միայն ՀՀ քաղաքացիների կամ ՀՀ-ում կացության կարգավիճակ ունեցող և բնակվող օտարերկրյա քաղաքացիների դեպքում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին (նման պահանջի առկայության դեպքում): Համաձայն «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» (Foreign Account Tax Compliance Act (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի՝ Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

ՕՎԵՐԴՐԱՖՏ

Կուտակային ավանդի ձևակերպման պահից հինգ օրվա ընթացքում Հաճախորդին (բացառությամբ մինչ քսանմեկ տարեկան Հաճախորդների) տրամադրվում է օվերդրաֆտի հնարավորությամբ դեբետային քարտ՝ հետյալ տոկոսադրույքներով.

ԱՎԱՆԴԻ ԱՐԺՈՒՅԹ	ՕՎԵՐԴՐԱՖՏԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ	ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ
ՀՀ ԴՐԱՄ	Ավանդի տոկոսադրույք +3%	13.24% - 16.36%
ԱՅԼ ԱՐՏԺՈՒՅԹ	Ավանդի տոկոսադրույք +5%	5.38% - 7.5%

Օվերդրաֆտի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա, իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վարկային պարտավորությունները ժամկետում չկատարելու դեպքում Վարկառուի մասին տեղեկատվությունը կարող է գրանցվել ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրում և վարկային բյուրոներում, ինչը կարող է վատ ազդեցություն ունենալ Վարկառուի վարկային պատմության վրա և հետագայում խոչընդոտ հանդիսանալ վարկ ստանալու համար:

1

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Օվերդրաֆտը տրամադրվում է ներդրված ավանդի ժամկետով, միայն ՀՀ դրամով և ավանդի մինչ 83.3%-ի չափով, եթե ավանդը ներդրվել է դրամով, մինչև 66.7%-ի չափով, եթե ավանդը ներդրվել է այլ արժույթով:

Օվերդրաֆտի տարեկան փաստացի տոկոսադրույքը Հաճախորդի վարկավորման ընդհանուր ծախսն է, որը ներառում է տոկոսագումարները Օվերդրաֆտի հետ կապված Հաճախորդի այլ վճարումները (առկայության դեպքում): Տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել տոկոսադրույքի փոփոխության, օվերդրաֆտը կանխիկ կամ անկանխիկ օգտագործելու դեպքում:

Օգտագործված Օվերդրաֆտի տոկոսները պետք է վճարվեն յուրաքանչյուր ամիս (Հաճախորդի հետ նախապես համաձայնեցված օրը)՝ քարտային հաշվին համապատասխան միջոցները մուտքագրելով՝ անկախ Օվերդրաֆտն օգտագործելու ամսաթվից:

Համապատասխան պարտավորության առկայության դեպքում Դինամիկ ավանդի դիմաց հաշվեգրված և քարտային հաշվին վճարված տոկոսագումարների հաշվին կմարվեն Օվերդրաֆտի դիմաց հաշվարկված տոկոսները:

Օվերդրաֆտի տարեկան տոկոսադրույքը հաշվարկվում է օրական:

Օվերդրաֆտների վճարների ուշացման տույժը տարեկան 24% է: Հաճախորդն իրավունք ունի պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու օվերդրաֆտի պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ): Այդ դեպքում Հաճախորդը պարտավոր է օվերդրաֆտի գումարը օգտագործելու համար Բանկին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: Օվերդրաֆտի պայմանագրի լուծման հետ կապված որևէ այլ հատուցում Հաճախորդից պահանջվել չի կարող:

Օվերդրաֆտի տրամադրման համար լրացուցիչ փաստաթղթեր չեն պահանջվում:

Արտարժույթով տրամադրվող օվերդրաֆտների դեպքում փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ օվերդրաֆտի մարումների վրա:

Օվերդրաֆտի տոկոսադրույքը հաշվարկվում է փաստացի օգտագործված միջոցների դիմաց:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք են հանդիսացել ՀՀ ԿԲ կողմից 14/09/2023թ.-ին հրապարակված փոխարժեքները:

ՕՎԵՐԴՐԱՖՏԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Օվերդրաֆտի ձակերպման գործընթացն իրականացվում է միայն Բիբլոս Բանկ Արմենիայի մասնաճյուղերում:

Օվերդրաֆտը տրամադրվում է անկանխիկ՝ գումարը հաճախորդի քարտային հաշվին փոխանցելու միջոցով:

Օվերդրաֆտը տրամադրվում է հաճախորդի կողմից մասնաճյուղում պայմանագրերը ստորագրելու օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում, եթե պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացվում են:

Օվերդրաֆտի մարումներն իրականացվում են ամսական վճարումներով. նախ՝ հաշվարկված տոկոսագումարը, հետո՝ մայր գումարը:

Տույժերի առկայության դեպքում դրանք վճարվում են առաջին հերթին:

Օվերդրաֆտի տրամադրման դրական կամ բացասական որոշման կայացման վրա ազդող հիմնական գործոններն են՝

- ա - վարկային պատմությունը,
- բ - վարկի նպատակային օգտագործման հիմնավորվածությունը,
- գ - վարկառուի կողմից տրամադրված տեղեկատվության իսկությունը,
- դ - հաճախորդի վարկունակությունը (ֆինանսական վիճակ),
- ե - հաճախորդի վարկարժանությունը (վարկառուի անձնական որակներ, վարկ ստանալու իրավական խոչընդոտների բացակայություն այլն):

Բիբլոս Բանկ Արմենիան Ձեր օվերդրաֆտի դիմումի վերաբերյալ որոշումը կկայացնի և այդ մասին Ձեզ կտեղեկացնի 7 աշխատանքային օրվա ընթացքում:

ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

- Վարկային պատմությունը վարկառուի կողմից ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն է, որը ցույց է տալիս վարկառուի պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները և/կամ պարտավորությունների և/կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկություններ:
- Վարկային պատմության ձևավորման աղբյուրներն են ԱԶՌԱ անդամ կազմակերպությունները (բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, հետաձգված վճարումներով գործարքներ իրականացնող կազմակերպությունները, ինչպես նաև՝ հանրային տվյալների բազաներից ՀՀ կառավարության սահմանած կարգով վարկային բյուրոյին անձանց վերաբերյալ տեղեկություններ տրամադրող պետական մարմինները), որոնք տրամադրում են վարկառուի վերաբերյալ տեղեկություններ (տվյալներ):

- Եթե վարկառուի վարկային պատմության մեջ առկա են սխալ կամ թերի տվյալներ, ապա պարզաբանման և ուղղման նպատակով վարկառուն համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթների, կարող է այդ մասին տեղեկացնել վարկային բյուրոյին կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվություն տրամադրող սուբյեկտներին (վարկային տեղեկատվության աղբյուրին): Տեղեկացումը կարող է իրականացվել համապատասխան գրավոր դիմում վարկային բյուրոյին ներկայացնելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով առցանց ռեժիմում «Իմ ԱՔՌԱ» անձնական գրասենյակից: ԱՔՌԱ-ի կողմից տրամադրված վարկային զեկույցների վերաբերյալ հաճախորդների բողոքների ընդունման/ստացման, քննարկման և վերջիններիս արձագանքման գործընթացը, գործողությունների հաջորդականությունը սահմանվում է «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ի «Վեճերի լուծման ընթացակարգ»-ով:
- Վարկի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելիս Հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ տեղեկությունները պետք է լինեն առավելագույնը 15 օր վաղեմության:
- Վարկային պատմությունը ներառվում է սքորի հաշվարկի մեջ դիմելու պահից վերջին 5 տարվա վաղեմությամբ:
- Բանկի ներքին կանոնակարգերով վարկային պատմության պահպանման ժամկետը սահմանափակված չէ:
- Բանկում վարկային պատմության ուսումնասիրությունը և վերլուծությունը իրականացվում է Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված նվազագույն պայմանների և պահանջների համաձայն:
- Վատ վարկային պատմությունը կարող է հիմք հանդիսանալ նոր ստացվող վարկերի (ինչպես նաև այլ բանկային ծառայությունների) պայմանների խստացման կամ ընդհանրապես չտրամադրման համար:

Վարկային պատմության մասին մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել նաև www.abcfinance.am and www.acra.am կայքերում:

Վարկային սքոր

Հաճախորդի վարկունակությունը գնահատելու համար կիրառվում է Բիբլոս Բանկ Արմենիայի վարկային սքոր գնահատական, որն իր հաշվարկի մեջ ներառում է \$ԱՅԿՈ սքոր: (\$ԱՅԿՈ-ն սքորինգային համակարգ է, որը տրամադրում է վարկառուի վարկային ռիսկի թվային գնահատականը: Սքորը հաշվարկվում է վարկառուի վարկային պատմության ուսումնասիրության և վերլուծության հիման վրա):

Բիբլոս Բանկ Արմենիայի վարկային սքորը ենթադրում է ինչպես հաճախորդի վարքագծին վերաբերող, այնպես էլ սոցիալ-դեմոգրաֆիկ գնահատում (աշխատանքային փորձի, եկամուտ-ծախս հարաբարեկացություն, տարիք, կրթական մակարդակ և այլն):

Սքոր գնահատականը կարևոր է այնքանով, որ այն թույլ է տալիս տվյալ վարկատեսակի տրամադրման կամ մերժման ավտոմատ որոշում կայացնել:

Բիբլոս Բանկ Արմենիայի սքոր գնահատականի վրա ազդեցություն ունեցող հիմնական գործոններն են ՖԱՅԿՈ սքորը, հաճախորդի տարիքը, եկամուտը, զբաղվածությունը և այլն: Առօրյայում ամենահաճախ հանդիպող գործոնների խոսուն օրինակներից են երկար աշխատանքային փորձը, վարկային պատմության ժամկետն ու առանց ժամկետանց պարտավորությունների վարկերի սպասարկումը, բարձր կրթական մակարդակը, որոնց շնորհիվ սահմանվում է էլ ավելի բարձր վարկային սքոր: Նույն տրամաբանությամբ՝ որքան շատ է բացասական տեղեկատվության առկայությունը վարկային պատմությունում (ժամկետանց պարտավորության մասին տեղեկատվություն, սկզբնական մնացորդից չափազանց մեծ ընթացիկ վարկային պարտավորությունը, շատ քանակի վարկային հարցումներ և այլն), այնքան վերոնշյալի պատճառով վարկային սքորն ավելի է նվազում:

Վարկային սքորի մասին մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել նաև www.abcfinance.am and www.acra.am կայքերում:

Քայլեր՝ վարկային պատմությունը և սքորը բարելավելու համար

Հաշվի առնելով, որ վարկային սքորի հաշվարկում ներառված է նաև ՖԱՅԿՈ սքորը, որը բնութագրում է Հաճախորդի վարկային պատմությունը՝ ընդհանուր սքորը բարելավելու համար անհրաժեշտ է բերալավել ՖԱՅԿՈ սքորը (վարկային պատմությունը):

ՖԱՅԿՈ սքորի բարելավմանն ուղղված առաջնահերթությունը վարկային պատմության բարելավումն է:

Առաջին հերթին անհրաժեշտ է առկայության պարագայում լիովին մարել նախկինում գոյացած ժամկետանց պարտավորությունները: Բացի այդ, ներկա պահին գործող վարկերի մասով անհրաժեշտ է բացառել նույնիսկ մեկ օրվա կտրվածքով ժամկետանց պարտավորությունների գոյացումը: Գործող վարկերի գծով վաղաժամկետ մարումը ևս կնպաստի վարկային պատմության և վարկարժանության բարելավմանը: Պետք է խուսափել անհարկի նոր վարկային դիմումների հարցումներից:

Նշում. Բիբլոս Բանկ Արմենիան Ձեր վարկի դիմումի վերաբերյալ որոշումը կկայացնի և այդ մասին Ձեզ կտեղեկացնի 7 աշխատանքային օրվա ընթացքում:

ԶԳՈՒՇԱՅՈՒՄ

Բանկը «Փողերի լվացման և անհաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «ճանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer) սկզբունքի հիման վրա սպառողից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին (նման պահանջի առկայության դեպքում):

Համաձայն «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի՝ Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) միասնական հաշվետվողական ստանդարտի (CRS - Common Reporting Standard) պահանջների՝ Բանկը Ձեր՝ օտարերկրյա պետությունների (տարածքների) հարկային ռեզիդենտ հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Օվերդրաֆտի մասին տեղեկությունները ներկայացված են նաև «Ձեր ֆինանսական տեղեկատվություն»՝ www.fininfo.am ինտերնետային էջում, որը ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է:

i

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Օվերդրաֆտի համար դիմելիս Բանկը Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները: